Ռաֆիկ Պետրոսյան
Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ, Իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան
Էլ.հասցե՝ research.incubator@eiu.am
Լիա Թևոսյան
Եվրասիա միջազգային համալսարանի Իրավագիտության ամբիոնի հայցորդ
Էլ.հասցե՝ lia.tevosyan@eiu.am

ԻՆՔՆԱԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Հոդվածը նվիրված է ակադեմիական միջավայրում գրագողության տարատեսակ համարվող ինքնագրագողության հասկացությանն ու վարքագծի՝ որպես անազնիվ, գիտության և գիտական մտքի ամլացմանը հանգեցնող երևույթի իրավական կարգավորմանը: Վերլուծության արդյունքում հետազոտության օբյեկտը դիտարկվում է նաև անձի սահմանադրական իրավունքների խախտման տեսանկյունից, որի կանխարգելման նպատակով էլ առաջարկվում է ձևավորել դրա դեմ պայքարի վերաբերյալ ընդհանուր իրավական մոտեցում:

Հիմնաբառեր. գրագողություն, ինքնագրագողություն, էթիկայի նորմեր, անուղղակի պայմանագիր, իրավակարգավորում, սահմանադրական իրավունքներ:

Ներածություն

Հեղինակային իրավունքի և բարեվարքության կանոնների խախտման երևույթներից առավել վտանգավորը գրագողությունն է՝ իր դիտավորյալ և ոչ դիտավորյալ դրսևորման ձևերով հանդերձ: Այս ձևերը, անշուշտ, տարբեր են: Սույն հետազոտության նպատակն է դիտարկել գրագողության ինքնուրույն տեսակ համարվող ինքնագրագողության հասկացությունն ու իրավակարգավորումը՝ էթիկայի նորմերի, գոյություն ունեցող հեղինակընթերցող անուղղակի պայմանագրի և գիտական միջավայրի սուբյեկտների կողմից անընդհատ նույնի թողարկման ու այլոց սահմանադրական իրավունքների խախտման տեսանկյունից:

Առաջադրվող հարցի իրավական կարգավորման ու ինքնագրագողության կանխարգելման նպատակով առաջարկվում է կատարել օրենսդրական բարեփոխում՝ առկա բացերի լրացման և գիտական հանրության մեջ նոր զարգացումներով հասկացական ապարատի հարստացման առումով:

Մեթոդ և տեսական հիմքեր

Ինքնագրագողության նկարագիրը սահմանելու համար տեսական հիմք է հանդիսացել թեմայի վերաբերյալ ոլորտի հայտնի տեսաբանների մոտեցումների սինթեզումը՝ հաշվի առնելով զարգացման միտումներն ու այն նորմատիվ իրավական ակտերի վերլուծությունը, որոնցով կարգավորվում են հետազոտության օբյեկտ հանդիսացող իրավահարաբերությունները: Այլ կերպ ասած՝ ուսումնասիրության հիմքում դրվել է քննարկվող հարցի վերաբերյալ իրավական հայացքների, գիտական տեսակետների իրավահամեմատությունը, այսպես կոչված՝ կոմպարատիվիստական մեթոդը:

Ինքնագրագողության հասկացությունն ու էությունը

Արևմտյան երկրներում self-plagiarism (The ethics of Self-plagiarism, էջ 1) (կամ auto-plagiarism (Michael C. Loui, 2002,էջ 531)) եզրույթը որի հայերեն թարգմանությունը արդի հայկական բառարաններում և հանրագիտարաններում բացակայում է, նշանակում է ինքնագրագողություն կամ ինքնաբանագողություն (թարգմանությունը հեղինակինն է և արվել է plagiarism բառի նույնականացմամբ): Ըստ Merriam-Webster բառարանի՝ այն «սեփական բառերի, գաղափարների գեղարվեստական արտահայտությունն է (ինչպես էսսեում), գոյություն ունեցող նյութի վերաօգտագործումը՝ հատկապես առանց դրանց ավելի վաղ օգտագործման մասին հիշատակելու» (Merriam-Webster Dictionary, 1833):

Ինքնագրագողությունը սովորաբար գիտական ոլորտում ընկալվում է որպես հեղինակի կողմից կրկնակի վերահրատարակում, ըստ որում՝ նույնականությամբ (կամ շատ սերտ նմանությամբ), գիտական տեքստերի ձևով և բովանդակությամբ, առանց նշելու, որ այդ տեքստերն ավելի վաղ կամ միարժամանակյա են (Котляров, 2011, էջ 6-12.), կամ դա վերաբերում է միևնույն մասի հրատարակմանը երկու կամ ավելի վայրերում, կամ նույն վերնագրի, կամ թեթևակիորեն կամ էականորեն տարբերվող վերնագրի ներքո, ընդ որում, առնվազն մեկ հեղինակ ընդհանուր է տեքստի մի քանի տարբերակների մեջ (Բեռլին 2009) (Andreescu, 2012, էջ 778):

Ստացվում է, որ հեղինակն իր կողմից ենթադրյալ գիտական նորույթը ներկայացնում է նախորդ հրապարակման որոշ կամ բոլոր տարրերով հանդերձ (օրինակ՝ տեքստը, տվյալները, պատկերները և այլն), դրանք վերաօգտագործելով նոր հրապարակման մեջ, ոչ մի կերպ չհիշատակելով նախկինում հրապարակված աղբյուրը: Ըստ նրա՝ նախկինում հրապարակված նյութը կարող է ամբողջապես դարձյալ հրապարակվել նույնությամբ կամ որոշակի փոփոխություններով (Miguel Roig, էջ 16), որն իրապես չի կա-

րող բավարարել գիտության պահանջները և համարվել ներդրում գիտության առաջընթացի մեջ, հաշվի առնելով այն, որ ամեն մի նոր չէ, որ ստեղծագործություն է ենթադրում, այլ միայն այն նորը, որը նպաստում է մարդկության առաջընթացին (Շաքարյան, 2005, էջ 179):

Ինքնագրագողության իրավական կարգավորումը՝ որպես անձի սահմանադրական իրավունքների պաշտպանություն

Հեղինակային և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների խախտում համարվող գործողությունները» վերտառությամբ 65-րդ հոդվածի 4-րդ կետում ներկայացված է գրագողության հասկացությունը, համաձայն որի. «Ուրիշի ստեղծագործությունից մտքեր, հատվածներ քաղելը, առանց դրանց ստեղծագործական վերամշակման և առանց ձեռքբերման սկզբնաղբյուրի նշման, և որպես իրենը ներկայացնելը կամ ստեղծագործությունն ամբողջությամբ իր անունով ներկայացնելը համարվում է գրագողություն»: Սակայն, ՀՀ-ում օրենքի մակարդակում «Ինքնագրագողություն» եզրույթի բնորոշումը որպես գրագողության ինքնուրույն տեսակ բացակայում է: Այն ոչ նորմատիվ իրավական ակտի տեսքով (որը տարածվում է կոնկրետ ակադեմիական միջավայրի մասնակիցների նկատմամբ) զետեղված է Հայաստանի բարձրագույն որակավորման կոմիտեի «Գրագողության դեպքերի վերհանման և կանխարգելման ուղենիշերում», համաձայն որի՝ «Ինքնագրագողությունը գրագողության տարատեսակ է, որը ենթադրում է առանց ստեղծագործական վերամշակման և առանց սկզբնաղբյուրի նշման նախկինում հրատարակված սեփական ստեղծագործությունների, դրանցում ներկայացված մտքերի, հատվածների կրկնակի, բազմակի, զուգահեռ վերահրատարակություն» (Գրագողության դեպքերի վերհանման և կանխարգելման ուղենիշներ):

Վերը նշված ուղենիշը նորմատիվ բնույթ ունի, սակայն քանի որ որևէ մարմնի կողմից չի հաստատվել, ուստի իրավաբանական ուժի տեսանկյունից պարտադիր համարվել չի կարող:

Գրագողության էությունը ուրիշի գաղափարների կամ մտավոր ներդրման գողությունն է (Michael C. Loui, էջ 531), իսկ ինքնագրագողությունը, լինելով գրագողության տարատեսակ (White paper the ethics of self-plagiarism, 2011, էջ 3), որպես իրավական կատեգորիա չի դիտարկվում, քանի որ հեղինակը չի կարող դրանով իրեն իսկ պատճառել նյութական վնաս, հետևաբար՝ օրենքի տեսակետից այս ոչ ակադեմիական վարքագծի դրսևորումը չի համարվում հեղինակային իրավունքի խախտում, չնայած որ ինքնագրագողության դեպքում հեղինակը փորձում է խաբել ընթերցողին (Miguel Roig, էջ 16): Այս կապակցությամբ Գաբրիելով Ե.Վ-ն իրավացիորեն նշում է, որ ինքնագրագողության դեպքում ձևականորեն ստեղծվում է «նոր» ստեղծագործություն, սակայն դրանում բացակայում է տեքստի յուրօրինակությունը (ինքնատիպությունը), ինչի արդյունքում լույս

է տեսնում կրկնակի արտադրանք (White paper the ethics of self-plagiarism, 2011, էջ 3).

Գիտության էթիկական հայեցակարգի համաձայն ընթերցողի և գրողի միջև գոյություն ունի անուղղակի պայմանագիր, ըստ որի ընթերցողը ենթադրում է, որ եթե այլ բան նշված չէ, ապա նյութը գրվել է տվյալ հեղինակի կողմից և որ այն նոր է ու ճշգրիտ, հեղինակի կարողություններից լավագույնն է: Սակայն գիտելիքի, գիտության առաջընթացի համար կարևոր է հեղինակի, առաջին հերթին՝ ընթերցողի և իր նկատմամբ նոր արդյունքների հասնելու վերաբերյալ բարոյական հաշվետվությունը, գիտության մեջ նոր արդյունքների ստեղծումը:

Այսպիսով, անձը, ունենալով իրեն երաշխավորված ստեղծագործության ազատություն (Սահմանադրության հոդվ. 43), ազատ է իրացնելու այդ ազատությունը, սակայն այն չպետք է հանգեցնի իրավունքի չարաշահման կամ հանգեցնի այլ անձանց իրավունքների խախտման: Այստեղ տեղին է մեջբերել Սահմանադրության 39-րդ հոդվածը, համաձայն որի. «Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին...»:

Վերը շարադրվածից բխում է, որ ինքնագրագողությունը կարող է հանգեցնել հետազոտական մտքի քայլ առ քայլ անկմանը, քանի որ նոր մտքերի, գաղափարների առաջքաշման փոխարեն կատարվում է հնի թարմացում կամ վերաձևակերպում, նաև հրատարակչի իրավունքների խախտում, որն առանձին հետազոտության թեմա է և որն էլ իր հերթին կարող է հանգեցնել ստեղծագործ մտքի ամլացման (աղքատացման) և այսպես կոչված՝տավտոլոգիայի:

Մենք համաձայն ենք Ե.Վ. Գավրիելովի հետ, ով ինքնագրագողությունը իրավական տեսակետից դիտարկում է որպես իրավունքի չարաշահում (Гаврилов Е.В., 2019, էջ 4), որտեղ ինքնագրագողը, չարաշահելով իր սահմանադրական իրավունքի իրացումը, խախտում է այլոց (այս դեպքում՝ ընթերցողի, գիտակրթական միջավայրի մասնակիցների) իրավունքները:

Հայաստանի Հանրապետության կողմից գիտության զարգացմանն ուղղված քաղաքականությունը, ՀՀ Սահմանադրությունից (հոդվածներ 15, 43, 86) բացի արտացոլված լինելով նաև Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասի ՀՀ օրենքի ընդհանուր դրույթներում, համաձայն որոնց «...Գիտությունը, որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն, գտնվում է պետության հովանավորության ներքո» (Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասի ՀՀ օրենքի ընդհանուր դրույթներ), արտահայտում է այն մոտեցումը, որ ինքնագրագողությունը որպես գիտության առաջընթացը խցանող և մարդու սահմանադրական իրավունքների խախտում, առաջ է բերում դրա դեմ պայքարի ընդհանուր իրավական մոտեցման անհրաժեշտություն:

Եզրակացություն

Գիտության անդաստանում ինքնագրագողության դրսևորումն անթույլատրելի է, քանի որ այն չի խթանում գիտական մտքի զարգացմանը և ինքնագրագողության դրսևորման դեպքում թեկուզև էթիկայի նորմերով պետք է սահմանել պատասխանատվություն:

Ամփոփելով կարող ենք նշել նաև, որ.

ա) օրենքում տրված գրագողության հասկացությունից չի բխում գրագողության տարատեսակ համարվող ինքնագրագողության էությունը, որի արդյունքում էլ ՀՀ ԲՈԿ-ը ենթաօրենսդրական ակտի տեսքով անդրադարձ է կատարում ինքնագրագողությանը և այն էլ միայն էթիկայի նորմերի խախտման տեսանկյունից, չլուծելով դրա դեմ պայքարի կամ պատասխանատվության վերաբերյալ հարցը,

բ) պետք է փաստել. չնայած այն հանգամանքին, որ գրագողության էությունը ուրիշի գաղափարների գողությունն է, որը վնաս է պատճառում իրական հեղինակին, իսկ ինքնագրագողության դեպքում հեղինակը նյութական վնաս չի պատճառում մեկ այլ հեղինակի, այնուամենայնիվ, այստեղ էականը «գողության» փաստի առկայությունն է,

գ) անհրաժեշտ է հստակեցնել ինքնագրագողության հասկացությունը, սահմանել, որ ինքնագրագողություն չի կարող համարվել հեղինակի բնօրինակ գիտական աշխատության վերանայումը եթե այն ուղեկցվում է նոր բնօրինակ, էական և որակական դատողություններով, մեջբերումներով, նորացված դատական պրակտիկայով և այլն: Այլ կերպ ասած՝ նոր ստեղծագործությունը պետք է լինի եզակի, իսկ փոխառությունները (հղումները)՝ ոչ չափազանց:

դ) հայաստանյան գիտական լեզվամտածողության մեջ «ինքնագրագողություն» եզրույթի տարածական շրջանառության և արդի հանրագիտարաններում ու բառարաններում դրա ընդգրկման ու ճիշտ մեկնաբանման անհրաժեշտություն է առաջացնել:

Օգտագործված գրականության ցանկ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2000.12.30/33(131) ընդունված՝ 05.12.2000, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=804 (մուտք՝ 10.09.2020)

Գրագողության դեպքերի վերհանման և կանխարգելման ուղենիշներ: Բարձրագույն որակավորման կոմիտեի կայք էջ, https://www.bok.am/node/11852, (մուտք՝ 10.09.2020)

Շաքարյան, Հր. (2005) *Փիլիսոփայություն:* (Ուսումնական ձեռնարկ): -Եր.: Երևանի պետական համալս.հրատ.

Гаврилов, Е.В. (2019). *К вопросу о самоплагиате в произведениях науки, //* Интеллектуальная собственность. Авторское право и смежные права. Изд.: ООО “Издательский дом “Интеллектуальная пресса” (Москва). № 10, էջեր 49-54:

Котляров, И.Д. (2011). *Самоплагиат в научных публикациях//* Научная периодика: проблемы и решения. № 4, էջեր 6 – 12:

8 Most Common Types of Plagiarism to Stay Away from! (n.d.). Apr 7, 2020. https://www.enago.com/academy/fraud-research-many-types-plagiarism/#comments (մուտք՝ 10.09.2020)

Andreescu, L. (2012, էջ 778). *Self-Plagiarism in Academic Publishing: The Anatomy of a* Misnomer, Science and Engineering ethics. Springer. Volume 19, Number 3, 775-797, doi: 10.1007/s11948-012-9416-1.

Merriam-Webster Dictionary, (1833). https://www.merriam-webster.com/dictionary/self-plagiarism (մուտք՝ 10.09.2020)

Michael C. Loui. (2002). *Seven Ways to Plagiarize: Handling Real Allegations of Research Misconduct.* Science and Engineering Ethics. Springer. Volume 8, Issue 4, 529-539. https://doi.org/10.1007/s11948-002-0005-6.

Miguel Roig, P. (2003, revised 2006, 2015). *Avoiding plagiarism, self-plagiarism, and other questionable writing practices: A guide to ethical writing* . https://ori.hhs.gov/sites/default/files/plagiarism.pdf (մուտք՝ 10.09.2020)

The Ethics of Self-Plagiarism//White Paper. Ithenticate, Professional Plagiarism Prevention. (2011). https://www.ithenticate.com/hs-fs/hub/92785/file-5414624-pdf/media/ith-selfplagiarism-whitepaper.pdf(մուտք՝ 10.09.2020)

References

Gitakan ev gitatekhnikakan gorcuneutyan masin Hayastani Hanrapetutyan orenq. (RA Law on Scientific and Scientific Technical Activities). HHPT 2000.12.30/33(131). Yndunvats 05.12.2000. (accessed: 10.09.2020)

Gragoghutyan depqeri verhanman ev kankhargelman ughenishner (Guidelines for detecting and preventing plagiarism). Bardzraguyn vorakavorman komitei kayq ej, https://www.bok.am/node/11852, (accessed: 10.09.2020)

Shakaryan, Hr. (2005). *Pilisopayutyun* (Philosophy): *(Usumnakan dzernark).*–.Yr: Yerevani petakan hamals. hrat.

Gavarilov, E. V. (2019). *K voprosu o samoplagiate v proizveseniyakh nauki [*On self-plagiarism in works of science] // I. S. Avtorskoe pravo i smezhnoye prava.

Kotlyarov, I. D. (2011). *Samoplagiat v nauchnykh publikatsiyakh* [Self- plagiarism in scientific publications]// Nauchnaya *periodika: problemy i resheniya.*

8 Most Common Types of Plagiarism to Stay Away from! (n.d.). Apr 7, 2020. https://www.enago.com/academy/fraud-research-many-types-plagiarism/#comments (accessed: 10.09.2020) (In Eng.)

Andreescu, L. (2012, էջ 778). *Self-Plagiarism in Academic Publishing: The Anatomy of a* Misnomer, Science and Engineering ethics. Springer. Volume 19, Number 3, 775-797, doi: 10.1007/s11948-012-9416-1. (In Eng.)

Merriam-Webster Dictionary, (1833). https://www.merriam-webster.com/dictionary/self-plagiarism (accessed: 10.09.2020)) (In Eng.)

Michael C. Loui. (2002). *Seven Ways to Plagiarize: Handling Real Allegations of Research Misconduct.* Science and Engineering Ethics. Springer. Volume 8, Issue 4, 529-

539. https://doi.org/10.1007/s11948-002-0005-6.) (In Eng.)
Miguel Roig, P. (2003, revised 2006, 2015). *Avoiding plagiarism, self-plagiarism, and other questionable writing practices: A guide to ethical writing* . https://ori.hhs.gov/sites/default/files/plagiarism.pdf (accessed: 10.09.2020) (In Eng.)
The Ethics of Self-Plagiarism//White Paper. Ithenticate, Professional Plagiarism Prevention. (2011). https://www.ithenticate.com/hs-fs/hub/92785/file-5414624-pdf/media/ith-selfplagiarism-whitepaper.pdf (accessed: 10.09.2020) (In Eng.)

Рафик Петросян
Заведующий юридической кафедрой Международного университета Евразия,
доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА
Эл.адрес: research.incubator@eiu.am
Лия Тевосян
Соискатель юридической кафедры Международного университета Евразия
Эл.адрес: lia.tevosyan@eiu.am

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ САМОПЛАГИАТА В РА

Статья посвящена концепции самоплагиата, который рассматривается в академической среде как разновидность плагиата. В ней говорится о правовом регулировании поведения как нечестного явления, ведущего к стерилизации науки и научной мысли. В результате анализа объект исследования рассматривается с точки зрения нарушения конституционных прав человека, и в целях предотвращения этого явления предлагается разработать общеправовой подход в борьбе с ним.

Ключевые слова: плагиат, самоплагиат, этические нормы, непрямой договор, правовое регулирование, конституционные права.

Rafik Petrosyan
Head of the Department of Law at Eurasia International University,
Doctor of Law, Full Professor, Honored lawyer of the RA
Email: research.incubator@eiu.am
Lia Tevosyan
PhD student in Law of the Eurasia International University
Email: lia.tevosyan@eiu.am

LEGAL REGULATION OF SELF-PLAGIARISM IN THE RA

The article is devoted to the concept of self-plagiarism, which is considered a type of plagiarism in the academic environment, and the legal regulation of behavior as a dishonest phenomenon, leading to the extinction of science and scientific thought. As a result of the analysis, the object of research is viewed from the point of view of violation of the constitutional rights of a person, and in order to prevent it, it is proposed to develop a general legal approach to combat it.

Key Words: plagiarism, self-plagiarism, ethical norms, indirect contract, legal regulation, constitutional rights.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2020թ. հոկտեմբերի 1-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2020թ. հոկտեմբերի 5-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2020թ. հոկտեմբերի 20-ին: